

## Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

## ՔՐԻՍՏՈՆԷՍ.ԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Տարբեր բաներ են տեսականը և գործնականը, նիւթականը և վերացականը, գիտակցականը և բնազդականը, դրանք բոլորը հաւատի պատուանդանն են. հաւատը մեր հոգեկան ամենաբարձր կարողութիւնն է. հաւատի արտայայտութիւնը կոչուած է կրօն, որ նախնական անգիտակ ձևից հասել է քրիստոնէական ամենակատարեալ ծայրագոյն դրութեան, տարածելով ամեն տեղ լոյս և սէր: Քրիստոնէութիւնը ազնիւ և գեղեցիկ զգացումների աշխարհ է՝ յաւիտենական երջանկութեան ձգտող. այդ զգացումներով պէտք է կրթենք մեր հոգին. մենք պէտք է աշխատենք գիտակցաբար քրիստոնեայ լինել: Որոշ ծէսերի, արարողութիւնների գործադրութեամբ ժարգուելով մարդ կերևի թէ քրիստոնեայ է, միայն դա արտաքին կը լինի և անկատար. ճշմարիտ քրիստոնէութիւնը պիտի լինի հոգով և գիտակցաբար: Ծէսերից, արարողութիւններից քրիստոնէութեան համար պէտք է օգտուել չափաւորապէս. հոյակապ տաճարները, օսկու, արծաթի, ակնեղէնի, մետաքսի գեղարուեստական զարդարանքները, մեծաշուք հանդէսները ի հարկէ կազդեն մարդու վրայ և կարող են մէկ աստիճան որոշ տրամադրութիւն յառաջ բերել յօգուտ քրիստոնէութեան. բայց դրանք քրիստոնէութեան հոգին չեն, դրանով մէկը բուն քրիստոնեայ չէ: Նոյնպէս պահքի, ծովի և այլ կանոնները, հրաշալի երգեցողութիւնները կարող են քրիստոնէաբար ներգործել, բայց դեռ կատարեալ բուն քրիստոնէութիւն չեն. կատարեալ քրիստոնեան և քրիստոնէութիւնն է գիտակցաբար, Աստծու խօսքի՝ Սուրբ Աւետարանի մտքով, հոգով իւրացումը և գործադրումը կեանքի մէջ, որով միայն կարելի է վերստին ծնուել: Պարզ բան է, առանց ս. Աւե-



տարանի չի կարելի քրիստոնեայ լինել, բայց Աւետարանը ոսկեհուռ կազմած, համբուրելով չէ, որ քրիստոնեայ կըդառնանք, այլ լաւ հիմնաւոր ծանօթ լինելով նրա միջի գրուածքին, և գործադրելով կեանքի մէջ Հեռու քաշուած անապատում չի կարելի կատարեալ քրիստոնեայ լինել, այլ միայն մարդկանց մէջ մարդուելով յաղթող լինել ս. Աւետարանի սկզբունքներով: Առանց Աստուծոյ խօսքի, առանց սուրբ Աւետարանի ուսուցման և իւրացման չի կարող քրիստոնէական գիտակցութիւն լինել, նրա ամեն մի խօսքը մի մարդարիտ է, որի իւրացնողը փրկուած է, նրա մի նախադասութիւնը մի կենարար բարի սերմ է, որ ինչքան էլ փոքր լինի, դարձեալ մեծ շքաւոր բոյս կըդառնայ կամ հարիւրաւոր պտուղ կըտայ, նրա ամեն մի խօսքը մի փոքրիկ շափ թթխմոր է, որ ալիւրի բոլոր զանգուածը կը խմորէ: Աստուծոյ խօսքը օղակներով շղթայի է նման, եթէ մի օղից պինտ բռնել ես, ամբողջ շղթան ես բռնել: Դրանով Քրիստոս բնակած կըլինի մեր մէջ, մենք էլ նրա մէջ, դրանով ճաշակած կըլինինք անմահական հացը և բաժակը, Քրիստոսի մարմինը և արիւնը: Արդ, ի՞նչ քրիստոնեայ կարող է լինել մէկը, որ ս. Աւետարանից մի խօսք, մի խրատ չէ իւրացրել, ի՞նչ քրիստոնեայ կարող է լինել մի ժողովուրդ, որ մշտապէս չի հաղորդուում սուրբ Աւետարանի ընթերցմամբ, ուսուցմամբ, քարոզութեամբ: Փրկիչը ասում է. ես եմ կեանքի հացը, ով սրանից ուտի, չի մեռնիլ յաւիտեան, ես եմ կենդանի հացը, ով ուտի իմ մարմինը և խմի իմ արիւնը՝ իմ մէջ կըբնակի և ես նրա մէջ: Սկզբից էր խօսքը և խօսքը Աստուծոյ մօտ էր և խօսքը մարմին դառաւ և բնակեց մեր մէջ, (Յով. Ա. 1-14 և Զ. 48-57): Եթէ մի ժողովուրդի մէջ չըլլայ Աւետարանի յարատեւ ուսուցումն, քարոզութիւն, նա միայն անունով քրիստոնեայ է: Քարեայ տաճարների և զարդերի վրայ հաղարներ ենք ծախսում, բայց սուրբ գրքի թարգմանութեան, հրատարակութեան, քարոզչութեան վրայ ոչինչ: Հայր Գ. Պետրովն ասում է, «Սուրբ Աւետարանի ընթերցումը սկիզբն է նոր կեանքի, գնանք մեր տան ոչխարներ»



րի ժօտ, տանէնք նրանց գէպի Աւետարանը, սա ինքը կանէ իւր ազդեցութիւնը, սա է միակ ճշմարտութիւնը, կեանքի բոլոր կնճռատ խնդիրների լուծումը: Ընդհանուր ուժով և իւրաքանչիւրս առանձին բացատրենք, ըմբռնենք Աւետարանի միտքը, որ է միակ մեր կողմնացոյցը կեանքի մոլորութիւններից գէպի ճշմարտութեան ճանապարհը:

Ն. Վ. Տ. Ա.

Ս. Գ. 25 Կ. 1907.

---

## ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

---

### ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Հոգեւոր դպրոցներ:—Միջնակարգ ուսման գաղափարը մի լինելով հանդերձ, կան միջնակարգ դպրոցներ՝ նախընտրած մի որոշ նպատակի, որի համար նրանք նախապատրաստում են իրենց սաների հոգին, սիրտը, միտքը, տրամադրութիւնը, ձգտումը: Ամբողջ աշխարհի միջնակարգ դպրոցների ուսման ծրագիրը գլխաւոր կէտերում մի լինելով, սակայն վերջնական նպատակի համար շատ ու քիչ տարբերում են ուսման ծրագրով, ուղղութեան վերաբերութեամբ որոշ գոյն և սահմաններ ունին և պարտաւոր են ունենալ: Այդպէս են հոգևոր, առևտրական, ղինուորական, տեխնիկական, գիւղատնտեսական և այլ միջնակարգ դպրոցները: Այդ դպրոցները մտնողը ի հարկէ մեծ մտամբ չի նշանակում թէ անպատճառ պիտի հոգևորական, ղինուորական, առևտրական դասնայ, դա կախուած է ապագայի կոչումից և կեանքի դանազան այլ պայմաններից: Գրա համար իսկ այժմ թոյլատրուած է գրեթէ անխափր բոլոր միջնակարգ դպրոցներից՝ սեմինարիաներից, բէաբականներից, առևտրականներից, ղինուորական կորպուսներից և այլն հաւատար հանրակրթական գիմնազիաների՝ ընդունել համալսարան և պօլիտեխնիկում ու ակադէմիա, ի հարկին քննութիւն տալով մի որ և է առար-